

Գ. ԳԱՍՏԱՐՅԱՆ

ՖԻԼԻ. ԳԻՄՈՒԹ. ԲԵԿԱՆԱԾՈՒ

ՄԻՎԵՏԱՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական բազմազգ ժողովուրդը, շնորհիվ մեր Միության մեջ ապրող ազգերի սերտ համագործակցության և սուսաց լեզվի, որպես Անինի—Ստալինի, որպես Մեծ Հոկտեմբերի լեզվի գերի հսկայական նշանակության, հենց ռեռուցիսայի առաջին տարիներից հրատարակում է մի քանի տասնյակ բառարաններ թե ազգային մայրենի լեզուներին վերաբերող և թե առնչված ուսաց լեզվին: Այդ բառարանները ամփոփում են լեզվական այն նորույթը, որն ստեղծել է ռեռուցիսան, հաղափելով հինը, մեր կյանքի համար անգործնականը Այդ աշխատությունները լրիվ չափով արտացոլում են մեր ժամանակից լեզվի պատկերը:

Սովետական Հայաստանը հեռու չի մնում կուլտուրական շինարարության վերելքին մտանակցելուց, նաև բառարանագրության ասպարեզում:

Մեր կուլտուրան հարուստ է բառարանային գրականությամբ և մեծ անցյալ ունի: Հայտնի ձեռագիր բառարանների հնությունը թաղված է հաղարամյակի խորքում, իսկ առաջին տպագիր բառարանը, առնչված հայերեն լեզվին, լույս է տեսել մեղնից 325 տարի առաջ: Միայն ոռուսերենին առնչված ունենք քառասուն անուն տպագիր բառարան:

Բառարանային աշխատությունները մեծ մասամբ կազմվել են Հայաստանից դուրս՝ Պոլսում, Վենետիկում, Վիեննայում, Մոսկվայում և այլ վայրերում՝ առնչված աշխարհի կուլտուրական շուրջ 15 լեզվի:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ն. Մառի անվան Լեզվականականի 1945 թ. գեկանմբերի 30-ի գիտական սեսիայում կարդացած գեկուցումից:

Այդ բառարանների մեջ մենք հանդիպում ենք այսպիսի աշխատությունների, ինչպիսիք են՝ Հայկագյան բացատրական հին և հատկապիս նոր բառարանները, Զալշախյանի՝ հայ-իտալիրեն, Ն. Բյուղանգացու՝ գաղղիկերեն-հայերեն, Կոյլավի՛ գերմաներեն-հայերեն, Գ. Դպիրի՛ պարսկերեն-հայերեն, Թաղբաշյանի ոռւսերենին առնչված զույգ բառարանները և ուրիշ այլ աշխատություններ, որպիսիք լրիվ կերպով արտահայտել են իրենց ժամանակաշրջանի լիզուն և իրենց գիտական ու ստեղծագործական կողմով կարող են պատվավոր տեղ զրավել համաշխարհային բառարանագրական կուլտուրայի պատմության մեջ։

Առինաւական Հայաստանի այժմյան տերիտորիայում, 17—18-րդ դարերում, պարսկական տիրապետության օրով զըրպված բառարանները մնացին էին ձևագիր վիճակում, մոռացված։ Նույն վիճակն է տիրել նաև ցարական Ռուսաստանի պայմաններում, չի հրատարակվել որևէ լուրջ աշխատանք։ Դեռ նախքան ոռւսական ախրատեատությունը Հայաստանում կաղմվել են ոռւսերենին առնչված մի շարք շատ զրոյնական քնույթ կրող բառարաններ, որոնց մեջ հիշատակության արժանի զործ է Եղիազար Տիր-Կաբապեայան Առնջեցու «Համառու բառարան» ի Հայոց ի Ռուսաց լիզուն ձևագիր աշխատությունը<sup>1</sup>։

Հայաստանի նախասովետական ջրջանում հայերեն գրական լեզուն կտրված էր իր բուն հայրենիքից, և լեզվական-գրական օջախներ էին ստեղծվել նախ Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում՝ Մոսկվայում, Լենինգրադում և ապա ավելի ուշ՝ Թբիլիսիում և Բաքվում։

Մինչև Հոկտեմբերյան ռեվոլյուցիան Հայաստանի այժմյան տերիտորիայում, լույս է տեսնել 5 անուն բառարանային աշխատություն, որոնցից երկուսը Ալեքսանդրովում (Լենինական), երկուսը՝ Էջմիածնում և մեկը՝ Երևանում։ Լենինականում հրատարակված առաջին բառարանը՝ Հ. Արագածյանի «Ծոցի ուսուհայերեն բառարան»ն է, որ լույս է տեսել 1895 թ. և նախառեվալած է, ինչպես Եղինակն է ասում, «Պյուղական դպրոցների ուսուցիչներին օժանդակելու համար»։ Այդ բառարանը չափազանց թույլ աշխատություն է և մոռացության է մատնվել հենց հրատարակման օրերին։ Երկրորդ աշխատությունը՝ Մ. Հարություն-

<sup>1</sup> ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենդարան, Զեռագիր, № 6418։

յանի «Օտարազգի բառերի բացատրական բառդիրքն» է, որ լույս տեսավ 1912 թ.:

Էջմիածնում հրատարակված առաջին աշխատությունը, որ լույս է տեսել 1911 թ., Սիոն Տեղ-Մանվելյանի «Արարատյան բարբառի ժողովրդական բառերի ցանկ-բառափնջիկ» է: Այդ աշխատությունը բարբառային բառերի սոսկ բառացանկ է:

«Բառափնջիկին» կցված մի քանի բառերի մեկնությունը ցույց է տալիս, որ աշխատության նպատակն է տալ արարատյան խոսվածքի նեղ բարբառային բառառությունը:

Էջմիածնում լույս տեսած հրկորդ բառարանային աշխատությունը Մահակ Ամատունու. պատու ու քանն» է, որը լավագույն գործերից մեկը պետք է համարել մեր բառարանների մեջ: «Բառու բանը բարբառային խոսվածքի համար, որպես բառարան, նույն արժեքն ունի, ինչ որ զրաբարի համար՝ նոր Հայկադյան բառարանը:

Նախասովետական Հայաստանում հինգերորդ անուն բառարանային աշխատությունը լույս է տեսել Երևանում 1883 թ. Դա Լեռն Տիղրանիանի «Բառարան բժշկական բույսերի լատիներենից հայերեն և ռուսերեն» աշխատությունն է, որ հրատարակվել է որպես «Առողջապահիկ» թերթի հավելված: Բառարանը 16 էջից կազմված մի աշխատությունն է, 24×16 սմ. ծավալով, և պարունակում է 203 բառ-հոդված:

Այս այլն ամենը բառարանային դրականության ընագագառում, ինչ եղիլ է Հոկտեմբերյան ռեռուզյայից առաջ: Այս թվին, ամենաշատը, կարելի է ավելացնել Հ. Ամառյանի պատրաստերենեւ միստայալ բառեր հայերենի մեջ՝ աշխատությունը, որը տպվել է Մոսկվա-Վաղարշապատում, Լաղարյան ճեմարանի Էմիլյան Գոնդի հրատարակությամբ, կազմելով նրա Գ. հատորը:

Պատկերը միանգամայն այլ է Սովետական Հայաստանում. դրոդն այլիս կարիք չունի մեկնաներ որոնելու համար զռներ բախելու, հեղինակն իր գործը զնում է հրատարակչական սեղանին, և աշխատանքը ստանում է իր արժանի գնահատականը: Միայն սովետական կարգերում մենք հնարավորություն ունեցանք մեր սեղանի վրա տեսնելու բառարանագրական այնպիսի կոռմող, ինչպիսին է ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի խսկական անդամ Հ. Ամառյանի «Հայերեն Արմատական Բառարանը», մի աշխատություն, որի տպագրման համար, սկսում 1895 թվից, հեղինակը բախել է մի շաբթ հրատարակչական դռներ և մնացել

անհետեանք։ Միայն «Երբ պատերազմը (1914—1918թ.թ.) վերացավ,—դրում է Հ. Աճառյանը,—և խորհրդային իշխանության հաստատությամբ Հայաստանը խաղաղության երս տեսավ, երբ բացվեց Հայաստանի համալսարանը, ևս ևս հրավիրվելով Պարսկաստանից իրեկ դասախոս մեր Պետական Համալսարանի, հնարաբորություն ունեցան նորից մատածելու բառարանիս հրատարակության մասին։ ... Կենագործելով՝ նախագահությամբ Ա. Կարինյանի 1925թ. նոյ. 17 հրամանագրով արտօնեց գրքիս հրատարակությունը, և ապա իր շնորհակալության խոսքն է ուղղում «Հայաստանի Խորհրդային իշխանության, որ առանց որևէ դրաքննական ձևականության, սկզբից մինչև վերջ աղատի ողողեց գրքիս հրատարակությունը»<sup>1</sup>

Սովիետական շրջանում բառարաննագրությունը, բառարաններ կազմելը կորցնում է իր սուբեկտիվ բնույթը, կենտրոնանում է պետական մարմի ձեռքում։ Ըստական բառարանագրության մեջ հանդես են գոյիս նշանավոր բառարանագիրներ՝ Շերբան Ուշակովը, Յուշյանովը և ուրիշների

Սովիետական Հայաստանի քսանինդամյա ժամանակաշրջանում լույս է տեսել 27 անուն բառարանային աշխատություն, գիտական, քաղաքական, նկատմամտակական, ուղղաղրական բնույթի՝ թե հայերեն և թե առնչված այլ լեզուների

Այս գեռ թվական կողմն էր գարերի ընթացքում ստեղծված 5 անուն բառարանի դիմաց 27 անուն 25 տարում, ծավալի տեսակետից անջրակետն ավելի է մեծանում, իսկ բովանդակության անսակետից՝ առավել ես։

Քանինդամյակի հայ բառարանագրության մեջ՝ ամենից առաջ տնհրամաքառ է հիշատակել Հ. Աճառյանի «Հայերեն Արմատական Բառարան»-ի անունը, մի աշխատություն, որ հայ լեզվի, հայ խոսվածքի գանձարանն է, որտեղ կարելի է առանյութ գտնել ոչ միայն հայագիտության բոլոր ճյուղերի, այլև մեր հարեան ժողովուրդների լեզվի համար։

Յոթ սովորածավալ հատորներից կազմված «Հայերեն Արմատական Բառարան»-ի 1—6 հատորները, ընագիրը հեղինակի ձեռքով գրված, 1926—1932թ.թ. լույս ահանվ ապա-

<sup>1</sup> Հ. Աճառյան, «Հայերեն Արմատական բառարան», հատ. է, Երևան, 1935թ., էջ 204։

Հետիպ հրատարակությամբ, իսկ 7-ըդ հատորը՝ 1935 թ.  
տպագիր:

«Հայերեն Արմատական Բառարան»-ը բազկացած է հինգ  
հիմնական բաժիններից:

Առաջին բաժնում գլխագրերով այլընական կարգով տված  
են բառարմատները:

Բառարմատներին անմիջապես հաջորդում են բառի թեք-  
ման ձևերը:

Արմատի քերականական առումները նշելուց հետո տված է  
բառի նշանակությունը, այն է՝ բառի կյանքն իր բոլոր նրբին  
առումներով:

Առաջին բաժնում կարեոր տեղ են գրավում վկայություն-  
ները, որ հեղինակը վերցրել է մեր մատենազրությունից, հիմք  
ընդունելով նոր Հայկապյան բառարանը և իր ընթերցումներն  
ու պրատումները: Թիչ գործածված բառերի դիմաց միջ է բեր-  
ված վկայությունը՝ ամրող նախադասությամբ:

Բառարմատների քերականական նշումները կատարելուց  
հետո տված են նույն արմատի տարրեր գրչությունները և ապա  
նույն արմատից առաջացած ածանցված ու բարդված բառերը:

Այս վերջին ենթարաժինը չափաղանց կարեոր է հայերենի  
համար, նախ՝ տվյալ բառարմատի կենսունակությունը պարզե-  
լու և, երկրորդ՝ արմատի կրած փոփոխությունները որոշելու  
համար:

Այստեղ տեղ են գտել հին և նոր շատ ու շատ բառեր, հատ-  
կապես հազվադեպ գործածվող բառեր: Այդ ենթարաժինը մի-  
տեսակ սակավադեպ բառերի բառարան է հանդիսանում:

«Հայերեն Արմատական Բառարան»-ի երկրորդ, և ամենա-  
կարեոր ու հիմնական բաժինը արմատի ծագման ստուգաբառ-  
նության բաժինն է:

Մազման կողմէց հեղինակը բառարմատները բաժանում է  
վեց խմբի՝ բնիկ հայերեն,<sup>1</sup> փոխառյալ բնաձայն, կրկնությամբ  
ածականների հավելումով կազմված ձևեր կամ, ինչպես ինքն է  
կոչում, հայակերտ, անստույդ և աղճատված բառեր:

Փոխառյալ բառարմատների մոտ մանրամասն նշանակված  
է փոխառության ճանապարհը:

Ավելի պակաս ուշադրություն է դարձված բնաձայն, հայա-

<sup>1</sup> Բառերը բնիկ և օտար ընդունելու խնդրում մենք սկզբունքորեն տար-  
բերվում ենք պըոֆ. Հ. Անառյանից:

կերտ (ինչպես՝ խծկել կամտկոր), անստույդ և սխալ դրչագրված բառերի վրա:

Հարեանցիորեն նկատենք, որ բառարմատների, ինչպես զլխալոր, այնպիս և վերջին չորս երկրորդական բաժիններում կտն շատ բառեր, որոնց վերջնական ստուգաբանությունը ճշտութեն կորոշվի, եթե մենք Մասի ուսմունքով մոտենանք ինպրին և զբարարի հարստության հետ միաժամանակ օգտագործենք ժողովրդական բարբառները և միջին հայերենի բառերը, որոնք մինչեւ այժմ, մեծ մասամբ, ծվարած են ձեռագիր աշխատությունների (արձակ, չափածո, բառարանների) մեջ:

Բառարանի ստուգաբանական բաժինը կաղմիլու ժամանակ է. Աճառյանը նկատի է ունեցել հայերենի ստուգաբանական ամբողջ դրականությունը, իսկ 1688 բառ էլ ի՞նքը՝ հեղինակին է ստուգաբանել, մեծ մասամբ փոխառյալ բառեր Արմատական Բառարանի երկրորդ բաժինը ստուգաբանության պատմությունն է, որը չափաղանց կարենու բաժին է հայտիտության ուստամեասիրության համար:

Այս բաժինն ամփոփում է հայերեն բառերի մասին եղած բոլոր ստուգաբանությունները սկսած 5-րդ դարից մինչև մեր օրերը: Այս բաժինը տրված է նեղ սյունակի մեջ, որպես երկրորդական բաժին: Որոշ բառերի ստուգաբանության պատմությունը բանում է մի քանի էջ:

«Սխալ ստուգաբանությունները առհասարակ չեմ քննադատած, — զլում է ոլրով. Հ. Աճառյանը: — Ի՞նքնին հասկանալի է արդեն, որ նրանք սխալ են, քանի որ չեն անցած երկրորդ բաժին մեջ: Քննադատել եմ միայն այն ստուգաբանությունները, որոնք ճշմարիտ լինելու երկությն ունեն և կարող են խառնել անուշագիր ընթերցողներին»<sup>1</sup>:

Արմատական Բառարանի յուրահատուկ բաժիններից մեկն է բարբառային բառերը, որ նեղինակը տալիս է «գալառական ձեռք» անվան տակ: «Ամենից սկիզբը զրվում են այն բարբառային ձեռքը, որոնք ամենից ավելի մոտ են զբարբին, քանի հեռանան մայր ձերից, այնքան էլ հեռու կդրվին. ամենից վերջը եկող ձեռքը ամենից ավելի տարբերակներն են, միենույն ձեզ ներկայացնող բարբառները շարված են պարզ այբուբենական կարգով:

<sup>1</sup> Հ. Աճառյան, նույն աշխատական էջ 22:

Բարբառային ձեերի մեջ բերված են ժնակ այն հայերեն-ը բառերը որ թրքախոս հայերը պահած են դեռ՝ իրեւ հիշատակ-կամ մնացորդ իրենց երբեմնի մայրենի լեզվից: Սրանցից էլ սակայն առել եմ միայն նրանք, որ որոշ տեսակետով հետա-քրքրական են. մյուսները թողել եմ՝ հատկապես տառադարձու-թյան անճշտության պատճառով<sup>1</sup>:

Արմատական բառարանում բարբառային ձեերի նշումը՝ «Բացի բարբառի ուսումնասիրության և գրաբար արմատի ծագ-ման քննության նպաստելուց, կարեռ է նաև նրանով, որ գործնական կերպով ցույց է տալիս, թե գրաբար արմատը ինչ չափով է պահված ժողովրդական կենդանի լեզվի մեջ»<sup>2</sup>:

Բառարանի վերջին բաժինը փոխառությունների բաժինն է, որի նպատակն է՝ պարզել հայերենի ազդեցությունը հարեան-օտար լեզուների վրա:

Նկարագրած այս հինգ բաժինները ներկայացնում են ամ-բողջական արմատական բառարանը: Այս բաժիններից յուրա-քանչյուրն ինքնին մի ուրույն բառարան է, երբեմն՝ բառարան-ների ժողովածու:

Պրոֆ. Հ. Աճառյանը ավելի քան քառասուն տարվա ըն-թացքում կարդացել է հայ մատենագրությունը և կազմել այդ-հակայական աշխատությունը, հեղինակի օգատգործած աշխատու-թյունները՝ 3800 անուն, կազմում են մի ինքնուրույն գործ՝ հայ լեզվաբանական մատենագրությունը: Միայն բառարանի վերջին բաժնի՝ փոխառյալ բառերի համար, հեղինակը ուսում-նասիրել է մեր հարեան ժողովուրդների մեռած և կենդանի լե-զուները և դուրս գրել փոխառությունները: Բավական է ասել, որ միայն Կամուսի (արաբերեն) 2855 էջանոց ընդարձակ բառա-րանի ընթերցումն ինքնին մի խոշոր աշխատանք է:

Արմատական Բառարանի դեռ ոչ լրիվ մշակված օրինակին ակադ. Մառը 1907 թ. ծանոթանալով գրում է, «Հ. Աճառյանի աշ-խատանքը, իմ կարծիքով, երբ նա ամբողջությամբ կտպագրվի; խոշոր երեսությ կհանդիսանա հայ լեզվաբանական գրականու-թյան մեջ, որպես թանկագին տեղեկատու ձեռնարկ, որի նմանը, ոչինչ չկա, ոչ միայն հայ, այլև եվրոպական գիտական գրակա-նության մեջ»<sup>3</sup>:

<sup>1</sup> Հ. Աճառյան, նույն աշխ., էջ 26:

<sup>2</sup> Հ. Աճառյան, նույն աշխ., էջ 27:

<sup>3</sup> Հ. Աճառյան, նույնը, էջ 202:

Արմատական Բառարանից, չնայած իր որոշ մասի քննադատակի և հնացած լինելուն, հայ բառարանագրության ամենաարժեքավոր կոթողներից մեկն է և պատահական չէ, որ լույս տեսավ իր հիմնական օջախում՝ Սովետական Հայաստանում Արմատական Բառարանը հայ լեզվաբանության և բառարանագրության մի տեսակ հանրագումարն է:

«Արմատական Բառարանից» ոչ պակաս արժեքավոր է, նույն հեղինակի «Հայոց անձնանունների բառարանը», որի 1-ին և 2-րդ հատորները լույս են տեսել 1942—1945 թ. թ.։

Անձնանունների բառարաններ մենք ունեցել ենք մեր բառարանագրության մեջ, ինչպես՝ Արբայի, Թեոֆիլյանի, Ճիվանյանի, Բժշկյանի, Խղնատիս Խաչատրյանի, այլև այդ բնույթի մի շարք ձեռագիր բառարաններ, բայց բոլորն էլ կամ ընդգրկել են Սուրբ Գիրքը, կամ աշխարհիկ և կամ երևելի մարդկանց անունները ու, ամենակարենորը, չեն կրում ստուգաբանական բնույթ։

Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը» ընդգըրկում է. «Այն բարոր անունները, որ պատմության ընթացքում, որեէ հայ անհատ կրել է երբենիցե, անկախ իր ունեցած դիրքից և աստիճանից, ընդունած կրոնից ու դավանանքից և ապրած շրջանից կամ երկրից։»

Անձնանունների բառարանը ընդգրկում է հայոց պատմության ամենահին շրջանից մինչև 1500 թվականը ամենայն մանրամասնությամբ, իսկ հետագա շրջանի համար տրված է միայն պատմության, զբականության նշանավոր գեմքերը՝ կաթողիկոսների, պատրիարքների, բանաստեղծների, հեղինակների, խոշոր ճանապարհորդների անունները։

Ամեն մի մնխտն դիմաց տրված է սեռը, այսինքն արական անուն է, թի իգական, ապա անվան ծագումն ու ստուգաբանությունը՝ համապատասխան ձևերը մի քանի լեզուներով, հետո ժամանակագրական կարգով այդ անունը կրող անձնանունները, մանրամասն նշելով աղբյուրը, որտեղից քաղել է։

Բառարանում յուրաքանչյուր անձնանվան դիմաց տրված է նաև համառոտ կենսագրական։

Աշխատությունը կազմելու համար հեղինակն օգտագործել է մեր հին մատենագրությունը և 50-ից ավելի ձեռագրական ցուցակներ։

«Հայոց Անձնանունների Բառարան»-ը մի պատրաստի տեղիկատու հանրագիտարան է:

Որքան ուրախ ենք մեր գրասեղանից անբաժան գրքերի ցանկում ունենալու «Անձնանունների Բառարանի» առաջին երկու հատորները, նույնքան և ցավում ենք, որ ձգձգվում է այդ կարենոր աշխատության ավարտումը:

Քանին հագամյակի բառարանագրական մյուս խոշոր աշխատանքը Ստ. Մալլասոյանցի «Հայերեն Բացատրական Բառարանն» է, որ լույս տեսավ 1944—1945 թվականներին:

Այդ աշխատանքն սկսվել է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու հենց առաջին տարիներից, 1922 թվից:

Ձեռնարկելով իր քառահատոր բառարանի աշխատանքներին, հեղինակի առջև ծառացել է երկու խնդիր. կամ բառեր հավաքել մատենագրությունից և պարզերական մամուլից և ապա ձեռնարկել բառարանի հորինման, կամ բառապաշարի, մասնավորապես նոր գրական լեզվի բառապաշարի կողմից բառվականանալ արդեն՝ հավաքված նյութերով և ձեռնարկել բառարանի հորինման, եղած նյութը ընդհանուր սիստեմի վերածել, մանրամասն նշելով բառերի նշանակությունները, ոճերը և այլն:

Կարծում ենք, որ հարգելի հեղինակը, իր կյանքի ՅԱ գարունքին ձեռնամուխ լինելով այս շնորհակալ աշխատանքին, ճիշտ է վարվել ընտրելով այս երկրորդ, թեկուղ թերի, ճանապարհը:

Գրականությունից և պարբերական մամուլից բառեր հավաքելը և ըստ հնարավորին լիակատար բառարան կազմելը երկար տարիների գործ է, մի մարդու կյանքը բավական չէ այդ աշխատանքը կատարելու համար:

Մեր գրականության մեջ հայերեն և հայերին-օտար տպագրված բառարանները միայն հեղինակի օգտագործած 10 աշխատությունները չեն, այլ մի քանի անգամ ավելի: Զէ որ, եթե Պ. Լուսինյանի և Կ. Բասմաճյանի ու, առավել ևս, Մ. Հովհաննիսյանի, ինչպես ճիշտ կերպով նկատել է նաև Ստ. Մալլասոյանցը, բազմաթիվ սխալներով բառարանները հեղինակն օգտագործել է որպես հիմնագրյուր, ապա դրանցից շատ ավելի արժեքավոր են Կ. Ռուկանի «Առձեռն բառարան հայերեն-գաղղիերեն» և Պ. Կարապետյանի «Մեծ բառարան հայերեն-օսմաներեն» աշխատությունները: Վերջապես, արդյոք օգտագործած աղբյուրների բառապաշտը լրիվ ընդգրկված է «Հայերեն Բացատրական

Բառարանում: Թերթենք հեղինակի օգտագործած ամենահիմնական ազրյուրը՝ Հ. Աճառյանի «Արմատական բառարանը»: Այդտեղ որպիս նոր բառերի, հանդիպում ենք, դասարաշխում, դասացակալ, դասաբաշխություն, անցուրդ, բաժնետոմս, գուգարան, դրոշակալայ, դրոշակավոր, դրոշահամբույր, գրչագլական և այլ բառերի, բառեր, որոնք շատ դորժածական են մեր ժամանակակից գրտկանության մեջ, մինչդեռ այդ բառերը տեղ չեն գտել բառարանում:

Հարգելի հեղինակը գիտակցելով, որ միայն բառարանային սահմաններում ամփոփվելը պակասավոր է, զրում է. «Այս աղբյուրներից գուրս (իր օգտագործած Գ. Դ.) ինքս կարողացել եմ հավաքել մի քանի հեղինակներից (Պոռշյան, Շուղարյան, Գամառ Քաթիպա, Հ. Թումանյան և այլն), ժողովրդական երգերից և իմ մայրենի՝ Ախալցիայի բարբառից, ինչպես նաև սովետական ժամանակի հայ մամուլից ու գրականությունից բառեր, որոնց բոլորի գումարը կարծում եմ համեմում է մինչև երեք հաղարիս:<sup>1</sup> Այդ շատ լավ է, թենիւզ որքան էլ քիչ կատարված լինի, այնուամենայնիվ դրտկան երեսույթ է: Այսպես վարդելով հանդերձ, հեղինակն աչքաթող է արել այժմ շատ գործածական՝ գետանց, առանցքակար գաղգահ, դաղդահաշինություն, թիմ (ինչպես՝ Երևանի հավաքական թիմը), աճյունասափոր, այլան (Իսահակ, էջ 22), բառաքննություն, գործարկել, դաշտավարկան, դաշտավարություն, դահուկազոր, զրիպ, զեղաժպիտ (Հով. 128), աղակերուս (Մուր. հատ. IV էջ 13), ամբաստան (Մուր. հատ. IV, էջ 13), ենթաշրջան, դեղաբույս, զրոհայրին և այլ հարյուրավոր բառեր:

Հարյուրքան հաղար՝ բառ ունեցող բառարանում 120 կամ քիչ ավելի թվով բառ չգտնվելը չի կարող արժեքազուրկ դարձնել աշխատանքը, մանավանդ ինքը հեղինակն էլ այդ գիտակցում է, գրելով «Շատ անգամ մարդ ձգտելով մի բան կատարյալ կերպով զլուխ բերելու, չի կարողանում հասցնել և գործը կես ճանապարհին է մնում: Մտաբերեցի նույնպես ուրիշ աղպերի բառարանների օրինակը, դրանք սկզբում թերի են եղել և հետզհետե նորագույն հրատարակությունների մեջ կամ նորագույն բառարանագիրների կողմից լրացվել են: Ուստի որոշեցի գնալ երկրորդ ճանապարհով, այսինքն՝ բառամթերքի (մասնա-

<sup>1</sup> Սա. Մալխանյանց, «Հայերեն Բացարական-Բառարան» էջ ԺԱ:

գորապես նոր գրական լեզվի բառամթերքի) կողմից բավականանաւ արդեն հավաքված նյութերով և ձեռնարկել բառարանի հորինման, եղած նյութը ընդհանուր սիստեմի վերածել և որքան ձեռնաս էի ճիշտ ու մանրամասն նշել բառերի նշանակությունները, կազմել ոճերը, օրինակները և այլն,<sup>1</sup> Հեղինակը գտնում է, որ բառաքանակի տեսակետից բառարանը թերի է, «Բայց, եթե լիակատար հայերեն բառարան՝ անհնար էր ինձ կազմել, բառարանազրության նիշը պայմաններում, հում նյութի պակասության պատճառով՝ գոնե արի այն, ինչ որ հնարավոր էր ինձ համար։ Հետեւբար այս բառարանը ես նկատում եմ իրեն մի նախապատրաստական աշխատանք լիակատար հայերեն բառարան կազմելու։ Նա հետզհետե պետք է լրանա ու ճշգրտվի։ հաջորդ հրատարակությունների մեջ կամ ուրիշ՝ նորագույն բառարաններով։»

Մի կողմ թողնելով որոշ թվով բառերի անհաջող բացարությունները, հայտնենք, որ ընդհանուր առմամբ բառերի բացարարությունները պահած են պարզ և հասկանալի, ընդուզված է բառերի բոլոր՝ հին և նոր, զրական և ժողովրդական առումները։ Շատ ճիշտ կերպով տեղ է տրված նաև մի շարք կայուն կապակցությունների, ինչպես՝ դամոկլյան սուր, գորդյան հանգույց, պրեկրուստյան մահնակալ և այլն։

«Հայերեն Բացարարական Բառարանի» ամենամեծ արժանիքն այն է, որ հեղինակն ամեն մի բառ-հոդված կազմելիս տվել է բառի բոլոր նրբությունները և բառի իմաստի զարգացումն ու փոփոխությունները, մի հանգամանք, որ չափազանց կարելվոր է մի կողմից բառի նույրը երանգը գրսկորելու և մյուս կողմից՝ բառի կյանքը որոշելու համար։

«Կուտուրականության առաջին պայմանը զարգացած հարուստ և ճկուն լիզոն է, — գրում է Վահան Տերյանը։ Ծքեզշենքերը, պալատներն ու տաճարները այնքան ցայտուն կերպով չեն ցոլեցնում ժողովրդի կուլտուրան, որքան լիզոն։ Այստեղ, — մենք կասենք հատկապես բառարանազրության մեջ, — ամենից ցայտուն կերպով է արտահայտվում մի ժողովրդի ստեղծագործական դորությունը»<sup>2</sup>

<sup>1</sup> Ս. Մալիսոյանց, նույն աշխ., էջ թ.

<sup>2</sup> Վ. Տերյան, «Երկերի ժողովածու», 1925 թ., համ. IV., էջ 172.

Ստ. Մալխասյանի «Հայերեն Բացատրական Բառարանը» մեր վեղվական կուլտուրան արտահայտող նշանավոր մատյաններից մեկն է և արժանի կերպով ձոնվել է Սովետական Հայաստանի հիմնադիր, ժողովուրդների հանճարեղ Առաջնորդ, Զգերազանցված զորավար Ի. Վ. Ստալինին:

Բառարանագիր հեղինակներից միայն նրանք են անուն թողել գրականության մեջ, որոնք գրել են նաև այլ աշխատությունները գնահատվել են իրենց այլ աշխատությունների համար և միայն ընդարձակ կենսագրականներում համառոտ տիկնարկ է արվել նրանց բառարանագրական գործունեության ժամանակ՝ Դժբախտաբար այս վիճակն է տիրել թե օտար և թե հայ գրականության մեջ։ Հանրագիտական բառարաններում Վ. Դալը արժեքավորված է որպես գրող, իսկ որպես բառարանագիր տչրաթող է արված, չնայած այդ գործի վրա է կորցրել իր կյանքի 53 տարին։

Աճառյանը և Մալխասյանը այն բառարանագիրներից են սակայն, որոնց անունները հայ գրականության մեջ անմահ են մնալու, առաջինն իր «Արժատական բառարան»-ով և երկրորդն՝ «Հայերենի Բացատրական Բառարան» աշխատություններով։

Սովետական Հայաստանի քանի հնդգումյակի բառարանագրության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում մասնագիտական բնույթի բառարանները։

Մեր երկրում ուժեղ թափով զարգանում էր անտեսությունը, կուլտուրան, հանգես էին գալիս անտեսական նոր ճյուղեր ու գիտության նոր բնագավառներ և այդ նորն արտահայտելու համար անհրաժեշտ էին նոր բառեր։

1924 թվից մեկը մյուսի հետեւ լույս են տեսնում բժշկագիտական, ռազմական, երկաթուղային տերմինների, շինարարական կառուցվածքների, իրավաբանական, առերարահաշվապահական, աշխատանքային և այլ բառարաններ։

Մասնագիտական բառարանները հսկայական դեր խաղացին մի կողմից պրատութեներ կատարելով, մեր մատենագրությունից կյանքի կոչեցին հարյուրավոր արդեն մեռած բառեր և մյուս կողմից կերտեցին նոր շատուշատ բառեր, որպիսիք հետագայում գարճան տերմիններ տվյալ մասնագիտության զծով։ Այդ բառարաններից մի քանիսն ավելի շատ, մյուսներն ավելի քիչ ունեին նաև խոպան մաս, բայց հիմնականում հաջող էին։ Այլ կերպ էլ լինել չէր կարող, որովհետև նոր պետականություն

ստացած լեզուն մասնագիտական տերմինների կերտման որոնութերի մեջ էր: Բառարաններում արվում էր մեծ մասամբ մի քանի բառեր, հետագայում ընտրություն կատարելու համար:

Հայերենի մասնագիտական բնույթ կրող բառարանների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Մ. Աբեղյանի «Ծուս-հայերեն Ռազմական Բառարան»-ը, որ հրատարակվել է Երևանում 1925 թվին: «Ծուս-հայերեն Ռազմական Բառարան»-ը լրիվ ստեղծագործական աշխատանք է: Հեղինակը, հայ բառարանագրության մեջ յուր տեսակի մեջ առաջինը հանդիսացող աշխատանքը ձեռնարկելիս, հարկ է համարել «Բառերը ժողովելու և նրանց նշանակությունը որոշելու համար դիմել անմիջապես նրանց գործածությանը ուղղական գրվածքների մեջ»:<sup>1</sup> Դրա համար հեղինակը կարդացել է Յօ. ից ավելի ուղղական կանոնագրքեր ու ձեռնարկներ և դուրս բերել ուղղական գործին անհրաժեշտ բառապաշտարը:

Բառարանի հայերեն բաժնի համար հիմնականում օգտագործել է գրաբար, և ժողովրդական խոսվածքի հարստությունները: «Գալով հայերեն բառերին, — գրում է Մ. Աբեղյանը, — պետք է ասել, որ մեր լեզվի մեջ կան բազմաթիվ ուղղական հին բառեր, որ աշխատել են օգտագործել. դրանցից կան, սակայն, այնպիսիները, որոնց նշանակությունը փոխված է նոր լեզվի մեջ, Բնականաբար, այդպիսի բառերն անվանված են նոր նշանակությամբ: Բայց և այնպես դարերից ի վեր ուղղական կյանքով ապրած չինելով՝ մեր լեզուն մնացել է այս նկատմամբ ընդհանրապես նախնական գրության մեջ, շատ քիչ են առաջ եկել ուղղական նոր բառեր և դարձվածքներ, որոնք և, ըստ հնարավորության, մասել են այս բառարանի մէջ»:<sup>2</sup>

Այս աշխատանքը ամենայն բարեխղճությամբ կատարելուց հետո, ուղղական բնույթ կրող ուլսական զեռ շատ բառեր չունեն իրենց հայերեն համապատասխան հոմանիշները: Այդ հմացածի համար, եթե չեն ընդունված օտար բառերը, սրանց նմանության կազմված են նոր բառեր (որ կարեոր չի համարված առանձնապես ցույց տալ) և որ գլխավորն է՝ հին բառերը գործածված են նոր նշանակությամբ ևս, որ չունեն մեր բառերը միայն այն պատճենով, որ այդպիսի կիրառության կարիքը չի

<sup>1</sup> Մ. Աբեղյան, «Ծուս-հայերեն Ռազմական Բառարան», Երևան, 1925 թ., էջ 3:

<sup>2</sup> Մ. Աբեղյան, նույն աշխ., էջ 5:

եղել. մինչդեռ դրանց համապատասխան բառերն ուրիշ լեզուների մեջ ունեն, ըստ տեղին, թէ մեր բառերի սովորական նշանակությունը և թէ այս նոր նշանակությունը, Կուլտուրայի փոխվելու հետ, բնտկանաբար ոչ միայն նոր օտար բառեր պիտի մտնեն մեր լեզվի մեջ, այլև մեր բառերի նշանակություններն են պետք է ընդարձակվեն նոր առումներով».<sup>1</sup>

Ինչպես ասեցինք, Մ. Արեգյանը իր բառարանում կերպել է շատ նոր բառեր, բայց կարեոր չի համարել առանձին նշանով ցույց տար թիրես ոչ մեկի մաքով չի անցնում, որ այժմ շատ գործածական բառերի մի շարք, առաջին անգամ հանդիպում ենք «Ռուս-հայերն Ռազմական Բառարան»-ում, ինչպես.— Ժամկեա (срок), պարճակ (попинность), սավառնորդ (авиатор), հրակնատ (амброзура), հեղակ (барак), գնդերիթ (болт), բրորդ (сангер), սալարկ (выстрилка), հանութ (съемка) և այլն. Հեղինակն այս բառերը կազմելով, միաժամանակ դիտակցված կերպով գրում է, որ «Զի կարելի ասել, թե միշտ հաջողությամբ կատարված լինի այդ» Կյանքի մեջ կիրառությունն արգենցնաբառություն կանի նոր բառերի կամ հին բառերի նոր առումների մեջ» (էջ 6):

Բառակազմության բնագավառում Մանուկ Արեգյանը թե ուղղմական և թիրավարանական բառարաններում ու մյուս աշխատություններում կերտել է շատ նոր բառեր, որոնք լայն գործածություն են գտել ժամանակակից հայերենում: Նրա գրչին են պատկանում վերջին քսանհինգամյակում կազմված արկուրդ վերջավորություն ունեցող բառերի մեծ մասը:

Մեր նպատակը չէ թվարկել և մանրազնին քննության առնել Սովետական Հայաստանի քսանհինգամյակի բառարանագրական բոլոր աշխատանքները, միայն համառոտակի նշեցինք մի քանի կարևորները:

Մինչ մեր խոսքի ընդհանուր եզրափակմանն անցնելը, մի քանի խոսք էլ ասենք ուղղագրական բառարանների մասին:

Դրագիտություն սովորեցնելու ինդրում մեծ նշանակություն ունեն ուղղագրական բառարանները: Ուղղագրական բառարանի գերը է՛լ ավելի է մեծանում, երբ նկատի ենք առնում հայոց լեզվի ուղղագրության մեջ կատարված մասնակի բարե-

<sup>1</sup> Մ. Արեգյան, նույն աշխ., էջ 6.

Փոխությունները, Պրոֆ. դոկ. Ա. Ղարիբյանի «Ռւղագրական բառարան»-ը, որ հրատարակվեց 1940 թ., չնայած իր փոքր ծավալին, մեր դպրոցականների համար եղավ ուղղագրության ուսուցման կարևոր ուղեցույց: 1944 թ. հրատարակվեց նույն հեղինակի «Հայերենի ուղղագրական նոր՝ բառարանը», որը իր բառապաշտով 3—4 անգամ ավելի հարուստ է նախորդ բառարանից:

Բառարանում ուղղագրված են միջին որակի ընթերցողի համար բոլոր անհրաժեշտ բառերը, իսկ այն բառերը, որոնք իմաստի ըմբռնման շփոթություն կամ դժվարություն կարող են ներկայացնել, տրված է նաև համառոտ բացարձություն: Բառարանում, բացի հայերեն գրական բառերի, որոշ թիվ են կազմում նաև բարբառային և օտար բառերի ուղղագրությունը: Հատկապես օտար բառերը բառարանի մեջ մտցնելով, ճիշտ է վարվել պրոֆ. Ա. Ղարիբյանը, քանի որ ուսանողության և աշակերտության կատարած սխալների մի զգալի մասը բաժին է ընկնում բառերի այդ հատվածին, գրողը, չըմբռնելով օտար բառերի ստուգարանությունը և ծագումը, կատարում է սխալներ:

«Հայերենի ուղղագրական նոր բառարան»-ում գրված է մի շաբաթ բառերի երկկերպ զրության ձևեր, որոնցից առաջնություն տրված է մեկին, սակայն, այս աշխատանքը կատարված է ոչ բոլոր զեպքերում:

Թվում է, թե պետք է լիովին ճշտել և յուրաքանչյուր բառի համար պահպանել միայն ու միայն մի ուղղագրություն և բառի զրությունը դնել որոշ օրենքների տակ՝ ստուգարանական, արտասանական և այլն:

Պրոֆ. Ա. Ղարիբյանի կազմած ուղղագրական բառարանի հիմքը ստուգարանական կողմն է, այդ է, որ մանրէ, հնեաբանություն և այլ բառեր գրվել են եղանակով:

Որքան դյուրին է ուղղագրական բառարան կարդալը, նույնքան և զժվար նրա կազմելը: Հեղինակը հավաքում, խմբագրում է բոլոր քիչ թե շատ զրության տեսակետից դժվարություն ներկայացնող բառերը և, յուրաքանչյուր բառի ուղղագրության համար պատասխանատվություն զգալով, մուծում բառարանի մեջ:

«Հայերենի ուղղագրական նոր բառարան»-ի ամբողջ բառապաշտը հաստատված է Տերմինարանական կոմիտեի կողմից:

Պրոֆ. Ղարիբյանը բառարանին կցել է ուղղագրական կանոններ և հայերենի կետազդրության օրենքները:

Ուղղագրական բառարանը ողջունելի գործ է և կազմված է օգնելու ամեն մի գպրօցականի, ուսանողի և հայերենի ճիշտգրության նախանձախնդիր անձնավորության:

Սովետական Հայաստանի քսանհինգամյակի բառարանագրության մեջ իր լուսան ունի նաև Հայաստանի Գիտությունների Ակադեմիան:

ԱՄՓՄ-ի Գիտությունների Ակադեմիայի Հայկական գիլարը 1941 թ. հրատարակեց Ա. Արարատյանի և ուրիշների «Ռուս-հայերեն բուսաբանական տերմինների համառոտ բառարան»-ը, բուսաբանական աշխատությունների թարգմանության գործին որոշ չափով օժանդակելու և բուսաբանական տերմինների մեջ միօրինակություն ստեղծելու համար:

Սովետական Հայաստանում, Գիտությունների Ակադեմիաստեղծվելու կապակցությամբ, կազմվեց առանձին Լեզվի Խնսությունություն, որը կրում է ակադ. Ն. Մարի անունը, իր բառարանագրական սեկտորով՝ Խնսություն հրատարակեց իր «Ռուս-հայերեն բառարան»-ը 38000 բառով և նույն ծավալի «Հայության բառարան»-ը: Աշխատությունները կազմել են խմբագրել են պրոֆ. դոկտոր Ա. Ղարիբյանը, պրոֆ. դոկտ. Ե. Տեր-Մինասյանը և Մ. Գևորգյանը:

Քսանհինգամյակի երկնղվյան բառարանների մեծ մասը առնչված է ոռուսաց լեզվին, սա պատճառական չէ: Մեր կուլտուրայի զարգացումը չկորցնելով իր աղդային ինքնությունը, դարեր ի վեր, և հատկապես այժմ, կազմված է ոռւս մեծ ժողովրդի կուլտուրայի հետ:

Սովետական Միության երեսունամյա տարելիցի շիմքին, երբ պատերազմական արհավիրքներից հետո անցել ենք խաղաղ շինարարական աշխատանքի, հայ բառարանագրության առջև ինդիր է զրգում՝ հայերեն գեղարվեստական, քաղաքական, գիտական գրականության և պարբերական մամուլի էջերից գուրս բերել բոլոր բառերը և, օգտագործելով մեր բառարանագրական հարուստ նյութն ու փորձը, ձեռնամուխ լինել հայերենի ընդարձակ բառարան կազմելու աշխատանքներին: